և յաստիճանս, և տարածանէր եկեղեցի եւ նուազէր կռապաշտութիւնն։ Ի հասանիլ հրամանի նորին 'ի նահանգսն բազումք նահատակեցան վասն հաւատոցն Քրիստոսի. առաւել կատաղէր բռնաւորն 'ի վերայ եպիսկոպոսաց. յետ նահատակութեան Փաբիոս եպիսկոպոսին Հռոմայ, կալան և զծերունին Աղէքսանդրոս եպիսկոպոսն Երուսաղէմի եւ կացուցին առաջի դատաւորին 'ի Կեսարիա Պաղեստինացւոց, 'ի դատաստան վասն 'ի Քրիստոս հաւատոցն։ Փառաւորեցաւ անդ երկիցս խոստովանելով զՔրիստոս Աստուած, զի էր ծերացեալ եւ լցեալ աւուրքք և պսակեալ ծաղկեալ ալեօք, կապեալ եդին 'ի բանտի և վախճանեցաւ նա անդ 'ի կապանս (250)։ Նոյնպէս և այլք բազումք յայլ տեղիս առաքինացան։ Եւ զկնի մահուան սորա կալաւ զԱթոռն Երուսաղէմի Մազբանոս։

ԳԼՈՒԽ Զ.

Որոգինէս։ Նովատիոս աղանդաւոր. Պօղոս Սամոսատցի։ Կինն տեւատես։

ԱՅՐՍ այս հռչակաւոր բազմահմուտ իմաստութեամբ իւրով, և դերազանց քան զվարդապետ իւր, ծնաւ յԱղէքսանդրեա քաղաքի յամի 185. որդի Լեւոնդեայ վկայի. աշակերտեալ Ս. Կղեմայ Աղէքսանդրացւոյ յԵրախայական դպրոցի. 'ի մանկութեան այր կատարեալ եւ լի սիրովն Քրիստոսի, քաջալերէր զհայր իւր գրովք 'ի բանտի կալ հաստատուն 'ի հաւատս Քրիստոսի։ Եւ հռչակ իմաստութեան նորա. եկաց վարժապետ Երախայական դպրոցին, ուր յաճախէին թիւ աշակերտաց և բազումք եւս 'ի կանանց յուսումն վարդապետութեան կրօնի՝ առ սիրոյ զգաստութեան և իմանալով խոտորնակ զբանսն Քրիստոսի. Մաթ. ԺԹ. 12. կրճատեաց զանձն, և իմացեալ Դէմէտրիոսի Եպիսկոպոսի Աղէքսանդրեայ յանդիմանեաց զնա։ Զոքաւ 'ի Պաղեստին, ուր 'ի Կեսարիա հրաման եառուն նմա Եպիսկոպոսունք յեկեղեցւոջ մեկնել զԳիրս. դժկամակեալ ընդ